«ՍԵՎԱՆԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ՝ ՈՒՍՈՒՑՉԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻՆ

ՀԵՂԻՆԱԿ՝ ՎԱՐԴԱՆՅԱՆ ՖՐԻԴԱ

ՂԵԿԱՎԱՐ՝ ՀԱՍՄԻԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՈՒՍ . ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝

ՍԵՎԱՆ-2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բովանդակություն.....2

Ներածություն.....3

1. Առարկայական մասնախմբերի դերը դպրոցում՝ որպես ուսուցիչների համագործակցությունն ապահովող խորհրդակցական մարմին.....5
2. Ինտեգրված ուսուցման շրջանակներում ուսուցիչների համագործակցության առանձնահատկությունները.....10
3. Մանկավարժական փորձի փոխանակումը դպրոցում՝ որպես կրթության որակի բարձրացման խթան.....13

Եզրակացություններ.....15

Օգտագործված գրականության ցանկ.....16

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից դպրոցը պահանջ ունի այնպիսի մանկավարժի, ով իր մասնագիտական գիտելիքների, մեթոդական զինանոցի, մարդկային որակների շնորհիվ կարողանում է հարստացնել ուսուցման և դաստիարակության մեթոդները, ավանդական մեթոդների կողքին լայնորեն կիրառում է ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաներ: Այս հրամայականը պայմանավորված է մեր երկրում իրականացվող կրթական բարեփոխումներով, որոնց նպատակը կրթության որակի բարելավումն է՝ հիմնվելով կարողունակահեն կրթության վրա:

Այստեղ տրամաբանական հարց է առաջանում՝ արդյոք ուսուցչի՝ սեփական մասնագիտական հմտություններն ու կարողությունները զարգացնելուն ուղղված ջանքերն արդյունավե՞տ են կամ ունի՞ արդյոք ուսուցիչը նորարարությունների հետևից գնալու, սովորողակենտրոն կրթությանը նախապատվություն տալու ցանկություն: Սրանք հարցեր են, որն հաճախ լսելի են ուսուցչական համայնքում:

Կարող ենք վստահաբար ասել, որ ատեստավորումներն ու վերապատրաստումներն իրենց նշանակալի ազդեցությունն են թողնում ուսուցիչների զարգացման, կրթության ու մասնագիտական որակների բարելավման շարունակականության վրա, այդուհանդերձ պակաս կարևոր չէ նաև գործընկերների հետ համագործակցությունը, փոխգործակցությունը ուսումնական հաստատության առարկայական մասնախմբերի շրջանակներում:

Հանրակրթական ուսումնական հաստատությունում ուսուցիչների մեթոդական աշխատանքը կազմակերպող, համակարգող հիմնական օղակ են հանդիսանում առարկայական մեթոդական միավորումները, որոնք ունեն իրենց կոնկրետ գործառույթները՝ որպես ուսումնական հաստատությունում մանկավարժական աշխատողների մասնագիտական աշխատանքը պլանավորող, բարելավող, վերահսկող մարմին: Մեթոդական միավորման անդամ ուսուցիչները հնարավորություն ունեն բարձրաձայնել իրենց մտահոգող ուսումնական հարցերը, քննարկել դրանք, հանդես գալ առաջարկություններով, նախագծերով ու ծրագրերով, կառավարել հնարավոր ռիսկերը, գտնել այլընտրանքային եղանակներ՝ նպատակ ունենալով արդյունավետ և ժամանակի կրթական մարտահրավերներին համապատասխան պլանավորել և իրականացնել ուսումնադաստիարակչական գործընթացը:

Միևնույն ժամանակ՝ մեթոդական միավորումների շրջանակներում ուսուցիչների փոխգործակցությունը նպատակ ունի համատեղ ջանքերով խթանել ուսուցիչների մոտիվացիան, ձևավորել առողջ ու մրցակցային աշխատանքային միջավայր, միասին քննարկել մանկավարժական մի շարք նորարարություններ, որոնք կարող են առավել դյուրին դարձնել աշխատանքային գործընթացը: Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ ուսուցիչները համագործակցությունը, նրանց միջև օրինակելի փորձի փոխամակումն ու փոխանցումը միտված է ուսումնական գործընթացն ավելի հարուստ, բովանդակային ու արդյունավետ դարձնելուն: Հենց այս համատեքստում է, որ կարևորվում է առարկայական մասնախմբերի դերն ու անցնցում աշխատանքը դպրոցում:

<u>Հետազոտության թեմայի արդիականությունը:</u> Ցանկացած միջավայրում գործընկարային առողջ մթնոլորտը, որը հենքը փոխվստահության վրա կառուցված համագործակցությունն է, մեծապես կարող է բարձրացնել իրականացվող աշխատանքի որակը: Դպրոցը նույնպես բացառություն չէ: Առարկայական մասնախմբերի շրջանակներում առողջ ու արդյունավետ գործընկերային միջավայրի

հիման վրա նոր հաղթանակներ գրանցելու անհրաժեշտության կարևորմամբ էլ պայմանավորված է սույն հետազոտական աշխատանքի թեմայի արդիականությունը:

<u>Հետազոտության նպատակը:</u> Ցույց տալ ուսուցչների արդյունավետ փոխգործակցության հնարավորությունները հանրակրթական ուսումնական հաստատության մեթոդական միավորումների կազմում՝ ուղղված ուսումնական գործընթացն էլ ավելի որակյալ ու հասանելի դարձնելուն:

<u>Հետազոտության խնդիրները.</u>

- Ուսումնասիրել մասնագիտական գրականություն, կրթական օրենսդրություն:
- Ձևակերպել այն արդյունավետ եղանակներն, որոնց միջոցով ուսումնական հաստատությունում գործընկեր ուսուցիչների միջև տեղի է ունենում համագործակցություն, փորձի փոխանակում:
- Կարևորել առարկայական մասնախմբերի դերը դպրոցում՝ հենվելով մեր փորձի վրա:

1.Առարկայական մասնախմբերի դերը դպրոցում՝ որպես ուսուցիչների համագործակցությունն ապահովող օղակ

Առարկայական մեթոդական միավորումը ուսումնական հաստատության խորհրդակցական մարմին է, որը հանդիսանում է հաստատության մեթոդամանկավարժական գործունեության հիմնական կառուցվածքային տարրը՝ իրականացնելով, ուսումնական, դաստիարակչական, մեթոդական աշխատանքների համակարգում, ինչպես նաև օժտված է վերահսկողական գործառույթներով: Մեթոդական միավորումների աշխատանքը բազմաբնույթ է և միտված է ուսուցչի մասնագիտական որակների բարձրացմանը, մանկավարժական համակազմի համար համագործակցության, փորձի փոխանակման հնարավորությունների ապահովմանը՝ խրախուսելով կոլեկտիվում աշխատելու և համագործակցելու վերջինիս ցանկությունը: Միավորման բոլոր անդամներն ունեն հավասարազոր իրավունքներ ու պարտականություններ, և նրանց աշխատանքն ուղղված է կրթության որակի բարելավմանը, ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետ

պլանավորմանն ու իրականացմանը: Հանրակրթական դպրոցում կրթական գործունեության արդյունավետ կազմակերպման նպատակով ձևավորվում են խորհրդակցական մարմիններ՝ մանկավարժական խորհուրդ, առարկայական մեթոդական միավորումներ, ծնողական, աշակերտական խորհուրդներ: Կարող են ձևավորվել նաև այլ խորհրդակցական (հոգաբարձուների, շրջանավարտների) մարմիններ[1]:

Մեթոդմիավորումների կազմման հարցում որոշում կայացնողը դպրոցի մանկավարժական խորհուրդն է: Մանկավարժական խորհուրդը խորհրդակցական մարմին է, որը կազմավորվում է մանկավարժական համակազմի օգոստոսյան առաջին նիստում: Մանկավարժական խորհուրդը ձևավորվում է տնօրենի հրամանով՝ մեկ ուսումնական տարի ժամկետով: Մանկավարժական խորհրդի անվանական կազմը գրանցվում է մանկավարժական խորհրդի արձանագրությունների մատյանում[2]: Մանկավարժական խորհրդի նիստում անդամները քննարկում են մեթոդական միավորումների կազմման հարցն ու անհրաժեշտության դեպքում ընդունում այն՝ կայացնելով համապատասխան որոշումներ: Աշակերտների թվով պայմանավորված՝ հանրակրթական ուսումնական հաստատություններում հաջորդիվ մոտ կամ հարակից առարկաներից ձևավորվում են առարկայական մեթոդական միավորումներ:

Առարկայական մեթոդական միավորումներն ստեղծվում են նույն առարկայի երեք և ավելի ուսուցիչների առկայության դեպքում: Մյուս դեպքերում կարող են ձևավորվել մեթոդական միավորումներ՝ հարակից առարկաների ուսուցիչներից: Դասվարների համար ստեղծվում է տարրական կրթության մեթոդական միավորում[3]: Միավորմանն անդամները հաշվետու են մեթոդական միավորման նախագահին, ով ի պաշտոնե համակարգում է միավորման աշխատանքները՝ դրանք ամփոփելով միավորման նիստերի ժամանակ: Առարկայական մեթոդական միավորումների նիստերը գումարվում են առնվազն յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ: Սահմանված կարգով նիստերն արձանագրվում են[4]:

Հանրակրթական ուսումնական հաստատություններում մեթոդական միավորում է կազմում կրթության առաջին՝ *տարրական* օղանը, որտեղ դասվարների

---

[1] https://www.arlis.am/documentview.aspx?docid=114876 ՀՀ Կառավարության որոշում:
[2] https://www.arlis.am/documentview.aspx?docid=114876 ՀՀ Կառավարության որոշում:
[3] https://www.arlis.am/documentview.aspx?docid=114876 ՀՀ Կառավարության որոշում:
[4] :Հհանրակրթության մասին» ՀՀ օրենք:

համար ստեղծվում է համագործակցային միջավայր: *Միջին* և *ավագ* դպրոցների մանկավարժական համակազմն ընդգրկվում է այլ առարկայական մասնախմբերում.

- *Հումանիտար*
- *Բնագիտական*
- *Ռազմահայրենասիրական*
- *Ընդհանրական*

Նկատենք, որ մասնախմբի աշխատանքային գործունեության շրջանակներում իրականացված բազմաբովանդակ գործառույթները օգնում են ուսուցչին համակարգել իր ողջ ներուժը, աշխատանքին մոտենալ ստեղծագործաբար, գնալ նոր ու հետաքրքիր գաղափարների որոնման ճանապարհով: Աշխատանքի ընթացքում ձևավորվում է կառուցողական ու նպատակային համագործակցություն և առողջ մրցակցային դաշտ: Բոլոր մանկավարժների աշխատանքը միավորման կազմում միտված է մեկ միասնական նպատակի՝ ունենալ որակյալ, աջակցող, իրավահավասար, արժեքների վրա հիմնված կրթական միջավայր:Միավորման անդամները հաշվետու են հաստատության ուսումնական գծով տնօրենի տեղակալին: Հանրակրթական ուսումնական հաստատության ուսումնական գծով տնօրենի տեղակալի պաշտոնային պարտականություններից է՝ ղեկավարել առարկայական մեթոդական միավորումների աշխատանքները, ընդհանրացնել և տարածել մանկավարժական աշխատանքի արդյունավետ փորձը, աջակցել ուսուցման նոր մեթոդների ներդրմանը, ուսուցիչներին հաղորդակից դարձնել գիտության և մանկավարժության նորագույն նվաճումներին[5]:

Մեթոդական միավորումը, որպես դպրոցի կառուցվածքային միավոր, ստեղծվում է ուսումնական հաստատության հետևյալ խնդիրները լուծելու համար.

- **Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների բարձրացում:**
- **Կրթության վերաբերյալ նորմատիվային և մեթոդական փաստաթղթերի ուսումնասիրություն:**
- **Ուսումնական պլանների, թեմատիկ պլանների պատրաստում, տարաբնույթ դասերի անցկացման մեթոդաբանության**

[5] https://www.arlis.am/documentview.aspx?docid=114876 ՀՀ Կառավարության որոշում:

կատարելագործում , դրանց մեթոդական և նյութատեխնիկական աջակցություն:

- **Մանկավարժական օրինակելի փորձի փոխանակում, փոխադարձ դասալսումների անցկացում, արդյունքների քննարկում:**
- **Առաջադեմ մանկավարժական փորձի ուսումնասիրություն և տեղայնացում:**
- **Թեմայի վերաբերյալ մեթոդական զարգացումներին ծանոթացում, առարկայի դասավանդման մեթոդների վերլուծություն, նոր մեթոդների քննարկում:**
- **Հաշվետվությունների, թեմատիկ զեկույցների պատրաստում:**
- **Ժամանակակից կրթական տեխնոլոգիաների ուսումնասիրություն, տեղայնացում:**
- **Առարկայական օլիմպիադաների ներդպրոցական փուլի կազմակերպում և անցկացում:**
- **Ինտեգրված ուսուցման պլանավորում և իրականացում և այլն:**

Ժամանակակից կրթությունն ուղղված է սովորողների մտածողության, մասնագիտական նախաձեռնողականության, ինքնուրույնության, կարողունակությունների ձևավորմանն ու զարգացմանը: Այս համատեքստում ուսումնական հաստատության գերխնդիրն է կոմպետենտ մանակավարժ ունենալը, ով արագ հարմարվում է փոփոխություններին, կրեատիվ է, կողմնորոշվող, անընդհատ թարմացնում և ավելացնում է իր մասնագիտական գիտելիքները: Այս մանկավարժական խնդիրները արդյունավետ լուծելու համար է, որ անհրաժեշտ է մեթոդմիավորման աշխատանքներին մոտենալ մեծ պատասխանատվությամբ, ընդառաջ գնալ համագործակցությունն ու փոխօգնության մթնոլորտի ձևավորմանը:

Առարկայական մեթոդական միավորումներն իրենց կատարած մատենավարական աշխատանքներով ևս հաշվետու են ուսումնական գծով տնօրենի տեղակալին: Այդպիսի փաստաթղթերից են.

- **Մեթոդական միավորման տարեկան աշխատանքային պլան, նիստերի արձանագրություններ:**
- **Նախորդ ուստարվա աշխատանքային գործունեության վերլուծություն:**
- **Առարկայական մեթոդական միավորման անդամների կատարած մեթոդական, ուսումնադաստիարակչական հետազոտական աշխատանքներ:**

- **Փոխադարձ դասալսումների արձանագրություններ:**
- **Իրականացրած արտադպրոցական և արտադասարանային միջոցառումների հաշվետվություններ ու պլաններ:**
- **Հաշվետվություն անհրաժեշտ մեթոդական ու դիդակտիկ աջակցության մասին:**

Այսպիսով, բերենք մեթոդական միավորման ներսում ուսուցիչների համագործակցության մի քանի իրավիճակային օրինակներ:

Բնագիտական առարկաների մեթոդական միավորման նախագահը մեկ այլ ուսուցչի հետ ներկայանում է սկսնակ ուսուցչի դասին, որպեսզի իրականացնի փոխադարձ դասալսում: Դասալսման նպատակն էր ստուգել, թե արդյոք ուսուցիչը կարողանում է կառավարել դասը, ապահովել սովորողների համաչափ մասնակցությունը և մի շարք այլ մանկավարժական հարցեր: Արդյունքում արձանագրվում է, որ սովորողների հիմնական մասը դասին պասիվ է կամ ոչ ուշադիր, այլ խոսքով՝ դասը չի ծառայում նպատակին, և ուսուցիչը դասի ավարտին չի կարողանում կատարել չափորոշչային պահանջներն ու հասնել վերջնարդյունքներին: Անշուշտ, պետք է հետևողական լինել, որ արձանագրված խնդիրը ստանա համապատասխան լուծում, ուսուցիչը հասկանա՝ որտեղ է իր բացթողումը և իրավիճակը շտկվի: Այդ նպատակով գումարվում է արտահերթ մեթոդական միավորման նիստ՝ սահմանելով հետևյալ օրակարգը.

- **Ուսուցիչները պետք է հանդես գան դասի ընթացքում մեթոդների կիրառման իրենց փորձի մասին մեթոդական զեկույցներով:**
- **Զեկույցները պետք է ներկայացվեն սահիկաշարի օգնությամբ:**
- **Քննարկման միջոցով պետք է պարզաբանվեն մեթոդների կիրառության առավելություններն ու թերությունները՝ հենվելով կոնկրետ օրինակների վրա:**
- **Փորձառու ուսուցիչները պետք է ունենան ելույթներ՝ դասի տիպերին, փուլերին վերաբերվող, կիսվեն իրենց օրինակելի փորձով:**

Ստացվեց, որ մեթոդական միավորման նախագահը, պահպանելով մանկավարժական էթիկան, խնդրին տվեց համակարգային լուծում՝ խուսափելով լարվածությունից, հանրային դիտողություններից ու պախարակումներից: Հիմախնդիրը ստացավ կառուցողական լուծում, իսկ սկսնակ ուսուցիչը, իր գործընկերների հետ համագործակցելով, զինվեց անհրաժեշտ հմտություններով::

Ուսումնասիրելով հիմնախնդիրը՝ եկանք եզրակացության, որ ուսուցչի մասնագիտական կոմպետենտության զարգացումն արդի կրթական պահանջների արտացոլանքն է, որում մանկավարժական կոմպետենտությունը սահմանվում է որպես ուսուցչի գիտելիքների, կարողությունների, իրազեկությունների և մասնագիտական պատրաստվածության մակարդակ, ինչը հնարավորություն է տալիս արդյունավետորեն գործել փոփոխվող սոցիալական, մշակութային և մասնագիտական իրավիճակներում: Ինչպես նաև արձանագրեցինք, որ ուսուցչի մասնագիտական որակների բարձրացման համար անգնահատելի է համագործակցությունը գործընկերների հետ՝ ինչպես ուղիղ, այնպես է առարկայական մասնախմբերի աշխատանքների շրջանակներում:

2.Ինտեգրված դասերի անցկացումն ու մանկավարժների համագործակցությունն այդ շրջանակներում կազմակերպման շրջանակներում

Ժամանակի մարտահրավերներով պայմանավորված՝ մեծացել է նաև սովորողների հետաքրքրությունների շրջանակը: Սովորողի համակողմանի զարգացումը, արժեհամակարգի ու վերաբերմունքի ձևավորումը պահանջում է միջառարկայական կապերի օգտագործում դասագործընթացում, ուստի այսօրվա կրթական համագարգում անչափ կարևորվում է ինտեգրված ուսուցումը: Ուսուցման

արդյունավետությունը բարձրացնում են ոչ թե մեխանիկորեն սերտած ինտեգրացված տեղեկություններով, այլ իրականություն միջառարկայական կապերով: Ուսուցման արդյունավետությունը բարձրացնելու համար անհրաժեշտ է ոչ թե ինտեգրացում, այլ ուսումնական առարկաների ընթացակարգային կորդինացում միջառարկայական կապերի, որոնք արտացոլում են բնության և հասարակության մեջ առկա կապերը[6]:

Ինտեգրված դասերի կազմակերպման ընթացքը բավականաչափ արդյունավետ համագործակցություն է ենթադրում բոլոր մասնակից ուսուցիչների համար: Սա համագործակցման ու փորձի փոխանակման անմիջական գործընթաց է, որի ընթացքում ուսուցիչները հավասարաչափ ջանք են գործադրում, որպեսզի ուսուցման գործընթացը լինի ապարդյունավետ: Ինտեգրված դասի շրջանակներում մեկ հասկացության ուսուցման ժամանակտեղի է ունենում մի քանի առարկաների միաժամանակյա ուսուցումը, որի ընթացքում առանձնացվում է առաջատար առարկան: Ինտեգրված դասերը կարող են միավորել ինչպես տարբեր առարկաներն իրենց ամբողջ ծավալով, այնպես էլ առանձին առարկաների բաղադրիչներ:

Աշխատանքի նախապատրաստական փուլում ուսուցիչները պարզում և որոշում են իրենց առարկաների համատեղ հետաքրքրությունը: Տարբեր առարկաներից վերցրած բաղադրիչները միավորելով մեկ դասի մեջ՝ հիմք է դրվում առարկայական ինտեգրմանը, փոխադարձ կապի ապահովմանը: Որպեսզի ինտեգրվեն, այսինքն՝ ճիշտ ձևով միավորվեն ուսումնական գործընթացի բաղադրիչները, պետք է կատարվեն այնպիսի գործողություններ, որոնք ի սկզբանե ունեն ստեղծագործական բնույթ: Նախապատրաստական գործունեության ընթացքում առանցքային նշանակություն ունեն ուսուցիչների համագործակցելու, իրարից սովորելու, ընդհանուր նպատակներ ու խնդիրներ գտնելու կարողությունները:

Նախապատրաստական գործունեության ընթացքում ուսուցիչը որոշում է.

- **Ինտեգրված դասի անցկացման դրդապատճառները, նպատակն ու խնդիրները:**
- **Առարկայական բաղադրիչների մեջ առաջատարի և երկրորդականի առանձնացումը:**
- **Ինտեգրման ձևը, դասի տեսակը, տիպը:**

[6] И. П. Подласый. Педагогика начальной школы, М. 2000, с. 233.

- **Ուսումնական նյութի հաջորդականության կառուցվածքը, ներկայացման միջոցները, մեթոդները, ուսումնաօժանդակ նութերը, նյութատեխնիկական բազան:**
- **Դերերի բաշխումը ինտեգրվող առարկաների ուսուցիչների միջև**
- **Տվյալ դասին սովորողների ուսուցման, վերահսկման ու գնահատման տեսակները:**

Այսպիսով, ելնելով ինտեգրված դասի տեսակից և ինտեգրվող առարկաներից, դասերի տիպերից, ուսուցիչները համատեղ կազմում են իրենց դասի նպատակները՝ զուգակցելով ընդհանուրը մասնավորի հետ, շաղկապելով ինտեգրվող նյութի բովանդակությունները տարբեր առարկաների տեսանկյուններից: Այս ամենը բավականին արդյունավետ կարելի է կատարել հենց առարկայական մասնախմբի ներսում՝ արդյունավետ համագործակցության արդյունաքում:

Ուսուցման գործընթացում կարևոր տեղ պետք է հատկացնել միջառարկայական կապերին, որոնք ուսուցման հաջողության անհրաժեշտ պայմաններից են: Միջառարկայական կապերի մասին Յ.Ա.Կոմենսկին իր «Մեծ դիդակտիկա» աշխատությունում նշում է, որ ուսումնական առարկաների փոխկապակցված ուսուցումը երեխաներին սովորեցնում է բացահայտել ուսումնասիրվող առարկաների և երևույթների միջև եղած կապերը. «Ամեն ինչ ամրապնդել բանականության հիմունքներով նշանակում է ամեն ինչ սովորել՝ մատնացույց անելով պատճառները, այսինքն՝ ոչ միայն ցույց տալ, թե ինչպես է այս կամ այն բանը տեղի ունենում, այլ նաև ցույց տալ, թե ինչու դա այլ կերպ լինել չի կարող: Չէ՞ որ իմանալ որևէ բան նշանակում է իրը ճանաչել իր փոխկապակցվածության մեջ»: Միջառարկայական կապեր գոյություն ունեն հատկապես տեխնոլոգիա, մաթեմատիկա, երկրաչափություն, կերպարվեստ, ֆիզիկա առարկաների միջև: Այդ առարկաներից յուրաքանչյուրի ուսուցման ընթացքում ձեռք բերված գիտելիքները, ունակությունները և հմտությունները լայնորեն կիրառվում են մյուս առարկաների ուսուցման գործընթացում:Այստեղ կրկին պետք է կարևորենք ուսուցիչների փոխգործակցությունը, մի նպատակի համար կոլեկտիվ աշխատանքը[7]:

Կրթության կարևորությունը գնահատելով՝ պետք է ընդունենք, որ կրթության միջոցով կարելի է հասնել հասարակական մտածողության, հոգևոր-բարոյական և

[7] http://gspi.am/media/journal/2014n1b/33.pdf Ս. Ժ. Արշակյան, Գիտական տեղեկագիր, Դասավանդման մեթոդիկա, Երևան, 2014, էջ 293:

մշակութային արժեքների զարգացման: Ինտեգրված ուսուցումը, ապահովելով տարբեր առարկաների գիտելիքների համակցումը, նպաստելու է հետազոտական հմտությունների, ստեղծագործական կարողությունների ձևավորմանը և դրանց հիմքի վրա նրանց կայուն զարգացման իրականացանը: Չմոռանանք, որ ուսուցման այս տեսակը կարելի է համարել հաջողված միայն մանկավարժական առողջ համագործակցության արդյունքում:

3.Մանկավարժական փորձի փոխանակումը դպրոցում՝ որպես կրթության որակի բարձրացման խթան

Կրթության պահանջների անցնցում իրականացումը մեծապես պայմանավորված է ուսուցչի աշխատանքից. որքան բարձր է մանկավարժական համակազմի մասնագիտական ու մարդկային որակները, ինքնազարգանալու, նորը սովորելու ցանկությունը, այդքան ուսուցիչը շատ բան ունի տալու մատաղ սերնդին: Ուստի կարող ենք ասել, որ ՀՀ կրթական համակարգում հաղթանակներն ու

պարտությունները կախված են այդ թվում նաև ուսուցչի աշխատանքից: Բոլոր ուսուցիչներն իրենց աշխատանքային գործընթացում և մասնագիտական զարգացման ընթացում պետք է կարևորեն սովորողների շահերը: Հենց այդ համատեքստում է կարևոր ընդառաջ գնալ կրթական բարեփոխումներին, մասնակցել վերապատրաստումներին ու ատեստավորումներին, ինքնակրթվել, համագործակցել գործընկերների հետ: «Մանկավարժական աշխատողը պարտավոր է համագործակցել գործընկերների հետ փորձի փոխանակման և մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով»[8]:

Անշուշտ, փորձառու ուսուցիչները, հիմնվելով իրենց անցած ճանապարհի վրա, տիրապետում են ավելի հետաքրքիր, արդյունավետ և համարձակ դասավանդման մեթոդներին, կարողանում են կառուցել արդյունավետ անհատական դասեր և ապահովել շարունակական ուսուցում: Հենց այստեղ է ծագում անհրաժեշտություն, որ դպրոցում ավելի կայացած ու փորձառու ուսուցիչները ամեն կերպ փորձեն օգնել սկսնակ կամ ոչ փորձառու ուսուցիչներին՝ կիսվելով վերջիններիս հետ իրեն մեթոդամանկավարժական գիտելիքներով, տեղեկատվական հոսքերի կառավարման փորձառությամբ, փորձեն խրախուսել ու մոտիվացնել:

Պակաս կարևոր չէ նաև նորարար ու ստեղծարար մանկավարժների առկայությունը մանկավարժական կոլեկտիվում: Մանկավարժական նորարարությունը կարող է դիտարկվել որպես ուսուցման բովանդակության և կրթական գործընթացի կազմակերպական-տեխնոլոգիական հիմքերի նպատակաուղղված փոխակերպում, որն ուղղված է կրթական ծառայությունների որակի, կրթական հաստատությունների և շրջանավարտների մրցունակության բարձրացմանը Նորարարական կրթությունը հիմնված է մի շարք գործընթացների՝

- **Կրթության ժամանակակից տեխնոլոգիաների ինտեգրման:**
- **Ինտենսիվ գիտահետազոտական գործունեության:**
- **Ուսուցման բովանդակության միջառարկայականության՝ ի տարբերություն ավանդական առարկայական մեկուսացվածության:**
- **Ուսուցման և տնտեսության կարիքների հետ բուհական հետազոտությունների կապի վրա[9]:**

[8] «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 27:
[9] https://aspu.am/website/images/old/upload/file/1(211).pdf ՀՊՄՀ, «Մանկավարժական կրթության զարգացման հայեցակարգ», Երևան, 2014,էջ 45:

Իհարկե, ուսուցիչների հիմնական մասը տիրապետում է իր գործառույթների հիմնական շրջանակին, այդ թվում դասի ընթացքում բովանդակության և նպատակների ներկայացման, անցումային կետերի ազդանշման և հիմնական կետերի ամփոփման առումներով: Այնուամենայնիվ, դա բավական չէ ուսուցման գործընթացն արդյունավետ ու ստացված համարելու համար: Ուսուցիչը պետք է կարողանա հստակ ներկայացնել մի շարք հիմնական գաղափարների շուրջ իր տեսլականը, ունենա համապատասխան առարկայական բառապաշար, կարողանա կիրառել գործուն հարցադրումներ, որոնք համապատասխանում են դասի ուղղվածությանը: Օրապահանջ է, որ ուսուցիչներին միավորի փոխադարձ վստահությունը, թիմային համերաշխությունը, միմյանց աջակցելու ազնիվ մղումն ու պատրաստակամությունը: Աշխատանքային միջավայրում յուրաքանչյուր ուսուցիչ պարտավոր է պաշտպանել ոչ միայն իր, այլև գործընկերոջ հեղինակությունը: Համագործակցային հարաբերություններում կարևոր է նաև քննադատական մտածողությունը, սակայն քննադատությունը և դիտարկումը պետք է լինի անաչառ և հիմնավոր, կառուցողական, տակտի զգացումով, բարյացակամ և ոչ վիրավորական: Անընդունելի է քննադատության ենթարկվող մարդուն ստորացնելը, հիմնախնդիրները պետք է լուծվեն ուսուցիչների ազատ և բաց քննարկումների միջոցով: Մանկավարժական աշխատողը պարտավոր է պահպանել ուսումնական հաստատության կանոնադրությամբ, ներքին իրավական ակտերով և կարգապահական կանոններով սահմանված պահանջները[10]: Այսպիսով, ուսումնական գործընթացի արդյունավետությունը մեծապես կախված է ուսուցչի մասնագիտական որակներից և դրանք զարգացնելու, նոր որակի բերելու մղումներից:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մեր հետազոտական աշխատանքի եզրափակիչ մասում հանդես գանք մի քանի արձանագրումներով:

Պայմանավորված կրթական բարեփոխումներով՝ շատ կարևոր է ուսուցչի մասնագիտական և մեթոդական գիտելիքների բարելավումը, ինչը կարող է ապահովել կրթության բարձր որակ, սովորողների առաջադիմություն և կրթական բարենպաստ ու աջակցող միջավայր: Այս համատեքստում կարևոր ենք համարում մանկավարժական աշխատողների փոխգործակցությունը, փորձի փոխանակումը ուսումնական հաստատության առարկայական մասնախմբերի շրջանակներում: Այս կերպ դպրոցում ստեղծվում է կանոնակարգված աշխատանքային միջավայրի, ինչն

[10] «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 27:

իր ուղղակի ազդեցությունն է թողնում ուսումնադաստիարակչական գործընթացների արդյունավետ կազմակերպան և իրականացման վրա: Ուսուցչի համար միավորման շրջանակներում առկա են բազմաթիվ հնարավորություններ՝ զարգանալու, ինքնակրթվելու, նոր ու հետաքրքիր գաղափարներ ու ծրագրեր նախաձեռնելու համատեքստում: Սա նաև վերահսկողական արդյունավետ գործիք է՝ վերահսկելու ուսուցչի փաստաթղթային շարժը, որը նույնպես շատ կարևոր է:

Կոլեկտիվ մոտեցումը մանկավարժական հիմնախնդիրներին օգնում է ուսուցչին, մոտիվացնում, հնարավորություն տալիս կիսվել սեփական փորձով, սովորել ու սովորեցնել՝ նպատակ ունենալով ապահովել արդի կրթական համակարգի սահմանած պահանջներն ուսուցչից:

Անհերքելի փաստ է, որ այս պարագայում ամեն բան հենց ուսուցչից է կախված: Եթե կա մոտիվացիա, առաջ գնալու, նվաճումներ ունենալու ձգտում, ապա տեխնոլոգիապես հագեցած այս ժամանակաշրջանում հնարավոր է գտնել ուղիներ ոլորտում

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. https://www.arlis.am/documentview.aspx?docid=114876 ՀՀ Կառավարության որոշում:
2. Հիանրակրթության մասին» ՀՀ օրենք:
3. http://gspi.am/media/journal/2014n1b/33.pdf Ս. Ժ. Արշակյան, Գիտական տեղեկագիր, Դասավանդման մեթոդիկա, Երևան, 2014:
4. https://aspu.am/website/images/old/upload/file/1(211).pdf ՀՊՄՀ, «Մանկավարժական կրթության զարգացման հայեցակարգ», Երևան, 2014:
5. И. П. Подласый. Педагогика начальной школы, М. 2000.